7. Յամենայն եկեղեցիս պատարագել զԲ. (*)։

Թուականով այս արձանագրութիւնները կարեւոր նշանակութիւն ունին վանքի պատմութեան համար. դոքա ցոյց են տալիս, որ վանքի հնագոյն մասը այրի մէջ է եղել, որտեղից և առնուած է անունը. Ներկայ տաճարի և ժամատան տեղում եղե՞լ են չէնքեր, թէ ոչ, դժուար է ասել. աւելի ուշ ժամանակի մի արձանագրութեան մէջ, ումն Շաքար բէգի անունով, յիշուած է եւ մի ուրիշ եկեղեցի Լուսաւորչի անունով, նա էլ քարայր էր ներկայ տաճարի հիւսիս-արևելեան անկիւնում, դարբասի մօտ. իսկ ներկայ տաճարը, յետագայում, ի հարկէ, նորոգուած, շինուած է ԺԿ. դարի երկրորդ տասնամեակին, մինչդեռ տեսանք գրաւոր յիշատակարաններ 1164 թուից սկսած։

Արձանագրութիւնների տեղից դատելով ԺԲ. դարի վերջին քառորդի հետ ենք կապում եւ հետեւեալ արձանագրութիւնները, որոնք գտնուում են Ստեփանոս կաթողիկոսի արձանագրութեան մօտ, Աստուածածնի վերին յարկի արեւմտեան պատի հիւսիսային անկիւնում. ումն Տիրանուն տալիս է քառասուն դահեկան և ստանում երկու ժամ (Ցաւել. Ա. 64). Դանիէլ և եղբայրները Նորագաւթում ընծաներ են տալիս և երեք ժամ ստանում (Ցաւել. Ա. 65). սրանց աղգական Մխիթարը տալիս է իւր այգին և երեք օր ժամ ստանում (Ցաւել. Ա. 66), ինչպէս և Առաւուտիկ քառասուն դահեկան տալիս Աստուածածնին և տարին երկու օր ժամ ստանում՝ մէկն իրեն, միւսը Աղբղին (Ցաւել. Ա. 67)։ ԺԲ. դարի վերջերին է պատկանում Կումիտասի եւ Հաղարդեղի արձանագրութիւնը Աստուածածնի ներքեւի յարկի, երեք փոքր, կամարակապ դռներով իրար կապուած խորաններից միջինի պատի վերայ (Ցաւել. Ա. 68). այս անձնաւորութիւնները իրենց նուիրաբերութիւնն ունին և տաճարի արևելեան պատի արձանագրութեան համեմատ (Ցաւել. Ա. 102). Կումիտասը յիշատակուած է նաև, իւր Ցակոբ աշակերտի արձանագրութեան մէջ (Ցաւել. Ա. 101), դարձեալ տաճարի արևելեան պատին, պէտք է ենթադրել շինութեան ժամանակներից։

Այս շրջանից մեր ձեռքն է հասել նաև մի կարևոր ձեռագիր, Էջմ. Գց. № 482/3795 մեծադիր Տօնապատմառը, ՈԼԹ (= 1190) թուից, գրուած Փիլիպպոս քահանայի ձեռքով, թղթի վերայ, արեւելեան



Պատկեր 136.

(*) Ստեփանոս կաթողիկոսի մասին տ. Նախընթաց գլխի մէջ։ Այստեղ անհասկանալի է 4-5 տողերի մէջ «Ծնընդոց Ցոհան». գուցէ, գրքերի անունը լինի, Ծննդոց գիրք, Ցովհաննու աւետարան, Թղթեր և Ցայտնութիւն. ընդգծուած դ. կասկածելի։ Վեցերորդ տողի մէջ «ՆԱ աւուրսն» անհասկանալի։